կաթագիր հաստ գծերով, բայց սիրուն և կանոնաւոր. վայլուն թանաքով, լուսանցքի մանրանկարները և մանրանկարչական գլխատառերը ճոխ և գեղեցիկ։ ԳՐԻՉ. Սարգիս սարկաւագ։ ԾԱՂԿՈՂԸ Հայրապետ քահանայ։ ՍՏԱՑՈՂ. Կոստանդին քահանայ. ՏԵՂՆ անյայտ, բայց գրին և նկարչութեան նայելով Սեբաստիա կամ Կիլիկիայի մօտ գտնուած երկրներում։ Պետք է ի նկատի ունենալ նաև բիւզանդական կայսեր անուամբ թուագրութիւնը։ ԺԱՄԱՆԱԿ. 1200 թ. փրկչական. «ի թուականութե՛ն հայոց ՈՆԹ, ի թագաւորութեանն յունաց Անկելոսի, ի դիտապետութե՛ն հայոց Տ՛ր Գրիգորի Ապիրատ անուն կոչեցեալ. յերեքտասան ամի առման է՛ մի. եւ յերրորդումն ամի թագաւորութեանն Հայոց Լեւոնի բարեպաշտի ի բռնակալութե՛ն այլասեռիցս Ուղնանին»։

Նկարուած է 304ᵖ., ընագիրը 13,6×5,8 սմ., մեր նկարը 14,6×6 սմ. քիչ մեծ ընագրից։

72. 73. *Մատ. Ս. Էջմ. № 364/987 (Կար. 358). Աւետարան, նկարազարդ, մագաղաթ, 33×26 սմ. թերթ 313։ ԳԻՐ. Միջին, ուղղանկիւն երկաթագիր. աւետարանը և յիշատակարանը թէև գրուած են միջին երկաթագրով, բայց յիշատակարանի գիրն աւելի թեք է դէպի ձախ և համեմատաբար աւելի փոքր։ Երկէջ 25×7 սմ.։ ԳՐԻՉ «Հայրապետ նուաստ քահանա»։ ՍՏԱՑՈՂՆԵՐ. Հայր Յովհաննէս և Բարսեղ վանուց վանական. սրանց մահուանից յետոյ նրանց Ներսէս քոյրորդին։ Նիւթի գրամը տուել են Յեւանէս, պարոն Ուքան եւ Պապքան։ ՏԵՂ. Սեբաստիա. «Ընդ հովանեաւ ս՛ր Ս՛ ծածնին եւ ս՛ր Սարգսի զաւրավարին, որ յանուն նոցա կանգնեցաւ ս՛ր եկեղեցիքս ի քաղաքիս Սեբաստիա»։ ԺԱՄԱՆԱԿ. 1211 թ փրկչական. «Յամի վեցհարիւրորդ վաթսներորդի թուականիս». տես նկարը։ «Արդ ի հայրապետութեանն ոչ գիտեմ ասել, եթէ զում գրեցից անուն, այլ ասեմ, թէ երից հակառակաց. Տ՛ր Յովհաննիսի, Տ՛ր Անանէի եւ Տ՛ր Դաւթի։ Իսկ ի մերում դիտապետութեանս Տ՛ր Գրիգորի ս՛ր և ընտրեալ եպիսկոպոսի»։*

Նկարուած է ա) բուն ձեռագրից 311ᵖ. ընագիրը 13,4×6,9 սմ. մեր նկարը 9,4×4,7 սմ.։

բ) Յիշատակարանից 211ᵖ. ընագիրը 17,3×7½ սմ., մեր նկարը 12×5 սմ.։

74. 75. *Մատ, Ս. Էջմ. № 232/378 (Կար. 225), Վախտանգի նկարազարդ Աւետարանը. կաշեկազմ 33½×25 սմ., հաստ մագաղաթ, 34×24 սմ, 308 թերթ։. ԳԻՐ. Աւետարանը երկաթագրով, ոչ շատ խոշոր. յիշատակարանը միջին երկաթագրով, խորաններին մէջ Եւսեբիի և Կարպիանոսի թղթ. փոքր երկաթագրով։ ԳՐԻՉ և ՆԿԱՐԻՉ. Թորոս 2ᵐ, 9ᵖ. 258ᵖ. (տես. նկարը. Տախտակ Ա.)։ ՍՏԱՑՈՂՆԵՐ. «Վախտանգ որդի Հասանա որդւոյ Վախտանգայ» և նորա ամուսինը Խորիշահ «դուստր մեծ սպարապետին Սարգսի 308 ᵐ.։ ԺԱՄԱՆԱԿ. Առաջին քառորդ ԺԳ. դարու, բայց հաւանօրէն ՈԿԱ=1212 թուին, երբ Խորիշահ վերաշինեց Մեծարանց վանքերը (տես. Բարխուդարեանց. Արցախ 171)։ Մի եկեղեցու շինութեան մասին յիշատակուած է և Աւետարանիս յիշատակարանում (Յիշատ. ամբողջ տես* I. A. Орбели. Гасанъ Джалалъ, Князь Хаченскій. Сп. 1909 *եր.* 408- Извѣстія имп. Академіи Наукъ.

Ծանօր. *Հատուածների սկզբնագիրը մանրանկարչական և առաջին տո-*